

**ՀԱԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՆՈՒՅՆԱՐՄԱՏ ԵՎ ՏԱՐԱՐՄԱՏ ԲԱՌԵՐՈՒՄ
(ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի.
համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)**

Միեր Քումունց

Բանասիրական գիտությունների թեկնածու
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՀՀ, ք. Գորիս, Սյունիքի 136/6
Էլ. հասցե՝ prof1972@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 07.02.2018, գրախոսվել է 10.03.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Հականշության արտահայտման միջոցները բարբառագիտական աշխատանքներում նույնքան կարևոր են, որքան ձևիմաստային մյուս խմբերինը, որովհետև ինչպես գեղարվեստական խոսքում, այնպես էլ կենդանի խոսակցական տարբերակներում հականվանական նշանակությամբ բառախմբերն ունեն ոճական կիրառություններ, բառհասկացությունների հակադրմամբ «կառուցվում են մի շարք դարձույթներ ու բանադրումներ»¹: Եթե հոմանիշները բարբառային բառապաշարում առանձնանում են իրերի և երևույթների իմաստային սերտության առումով, որ առանձնակի ընթացքով են ձևավորվում՝ մասնավորապես բառիմաստի պատմական զարգացմամբ և այլ գործոններով պայմանավորված, ապա հականիշները արտացոլում են արտաքին աշխարհի առարկաների, իրողությունների, եղելությունների միջև գոյություն ունեցող հակադրական կապերն ու հարաբերությունները², որ պատկերավորվում են մարդկային մտածողությամբ, համեմատության ու հակադրության եզրերով:

Հականիշ բառերի և հականշություն արտահայտող բառախմբերի իմաստաբանական հիմքը հակադրությունն է, որ արտահայտվում է ժխտմամբ, բացասմամբ, հակառակությամբ, համեմատությամբ՝ արտահայտված բառակազմական և իմաստաբանական գործոններով: Բառակազմական կաղապարավորմամբ հականշության համար սովորաբար առանձնացնում են հաստատում և ժխտում արտահայտող բառախմբերը, այսինքն՝ հակադրությունն ուղղակիորեն կախված է ձևույթային կաղապարավորումից, որ ինչպես գրական տարբերակներում, այնպես էլ Սյունիք-Արցախ

¹ Խլղայան 1976, 51:

² Մարգարյան 1993, 98:

բարբառային տարածքում ձևավորվում է նախածանցների և վերջածանցների միջոցով: Գրականի համեմատությամբ՝ **ան-**, **ապ-**, **դժ-**, **տ-**, **չ**³ նախածանցների դիմաց Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում հիմնականում տարածված են **ան-**, **բէ-||բէյ-||բէդ-**, **նա-||նը-**, **չ**⁴: Այս ածանցներից առավելապես գործուն է **ան-ը**⁵, որ առաջ է բերում ոչ միայն հասկացության ուղղակի ժխտում՝ **գրաբարից անցած՝ անառակ, անասուն, անաստված, բարբառում սրտեղծված՝ անբաշար, անգյուման, անհմասկ** և այլն, այլև ստեղծում է եզրեր՝ դրականի ու ժխտականի, ինչպես՝ **խէր-անխէր, անլուգու-լուգվանիկ, անկընօնք-կընքված, հըսկացող-անհասկ, անէփ-է/ի/փած** և այլն⁶: Բայց ինչպես նկատվում է, բառի դրական իմաստի ժխտումը կամ բացասումը հականիշ զույգ անդամներից մեկում կարող է ձևաբանական, իմաստաբանական և բառակազմական տեղաշարժեր առաջ բերել: Այսպես բառ-հասկացությունների ժխտման նպատակադրումից առաջացած տեղաշարժերն ազդում են բառիմաստին, և այդ հիմունքով էլ բառային բոլոր իմաստները չեն, որ հականիշ շարքեր են ունենում. **անկլծխ** բառի «1. գլուխ չունեցող, 2. չուղղորդվող, 3. փոխ. ամուսին չունեցող, 4. անիմաստ, 5. թափթփված» իմաստները նրա նույնարմատ դրական ձևում արտահայտվում են՝ **-ավ, -ավէր** ածանցներով, բայց այլ իմաստով՝ ձևավորված ձևաբանական տարրերից և բազմիմաստությամբ՝ **կըլխավ** «1. գլխի միջոցով, 2. խելացի», **կըլխավէր** «հիմնական, գլխավոր»: Եվ ստացվում է, որ նշված բոլոր հինգ իմաստներին զուգահեռ՝ ընդամենը երկուսն են, որ նույն հասկացության ժխտումն են արտահայտում: Դրական իմաստի՝ **ան-** նախածանցով հականիշ իմաստները նույնպես տարաբնույթ են, և բացարձակ չէ բառիմաստ ժխտումը, իսկ շատ դեպքերում դրանք ուղղակի հականիշ զույգեր չեն կազմում:

³ Հետաքրքրական է, որ բարբառախումբը ոչ մի բառ չունի պարսկերենից անցած **ապ-**, **դժ-** ածանցներով: Դա ևս խոսում է այն մասին, որ այդ ածանցները հայերենին անցել են հիմնականում գրավոր ճանապարհով, իսկ **ան-** ածանցի գործուն լինելը ևս վկայում է, որ այն փոխառություն չէ, ինչպես նկատում է Լ. Հովհաննիսյանը (այդ մասին տե՛ս Հովհաննիսյան 1989, 145-146):

⁴ Հականշություն կազմող մյուս նախածանցները, որ ոչ թե ժխտում, այլ հակադրություն են արտահայտում, գրեթե բացակայում են՝ **արտ-/ ներ-, համ-/հակ-, գեր-/ թեր-**: Դրանցով կազմված բառերը գրական ձևեր են բարբառախմբում և, ինչպես ասվեց, հակադրություն չեն կազմում՝ **համ**աձայն, **հակ**առակ և այլն:

⁵ Սյունիք-Արցախ բարբառախմբում **ան-** նախածանցը երբեմն հանդես է գալիս **ըն-** ձևով՝ **ընալի, ընդէրու, ընճանաչ, ընթօու, ընօրուտ** և այլն:

⁶ Դրանք բավականին շատ են՝ **անըզգամ, անթառամ, անխափան, անխէր, անկարք, անխըրատ, անծանօթ, անծըպուտ, անլը/ի/վա՛, անխըրատ, անկնօնք, անկօշտ/անկըշտըմնը, անկըտրէ, անկըրակ, անըրթէվութ, անկիր, անկուշտ, անկուտուր, անկօ** «գոյություն չունեցող» և այլն, որոնց մի մասը ենթակա է քննության:

Պատկերն այլ է տարբեր արմատներով ձևավորվող և հակառակ իմաստ նշող բառային զույգերում: Հակառակությունը ոչ թե ժխտմամբ, այլև հակադրական եզրերի զուգահեռությամբ է կառուցվում, ինչպես՝ **պընդօթուն-թուփօթուն**, **պըխըրակիլ-կ'ծվիլ**, **սամա՛ժուպիկ**, **քիշէր-ցիրէկ**, **ամառ-ծիմէռ**, **լամվ-փիս**, **էրգան-կարճ**, **կուճի-մէժ**, **դօճ/չ/աղ-լառի**, **լաց-ծիծաղ**, **մօք-պաց**:

Քանի որ **ան-** ածանցը, փաստորեն, բառահմաստաբանական միջոց է հականշության արտահայտման պլանում, որն ավելանում է մի դեպքում ուղղակիորեն հակադրվող բառին՝ արտահայտելով ժխտման նշանակություն, մի այլ դեպքում հակադրվող բառի արմատական ձևին՝ արտահայտելով մի բան չունենալու, մի բանից զուրկ լինելու նշանակություն⁷, ուստի կարող են առաջ գալ ձևաբանական երևույթներ, որ բնորոշ են միայն հականշություն արտահայտող բառերին:

Այսպես՝ գոյականներից **ան-** ածանցով կազմվում են ածականներ, որոնք, ինչպես նշվեց, մատնանշում են «բացասական նշանակություն»⁸, այլև մի բանից զուրկ, տվյալ հատկանիշից զրկված կամ առանց այդ բանի իմաստ՝ **աբուռ/զոյ./=անաբուռ/ած./**՝ «ամոթ չունեցող, ամոթից զուրկ», **Աստված /զոյ./=անաստված/ած./**՝ «խիղճ, կրոն, Աստված, հավատք չունեցող», **համութ/զոյ./=անհամութ/ած./**՝ «ամոթ չունեցող», **բախտ/զոյ./=անբախտ/ած./**՝ «ապաբախտ, երջանկություն չունեցող» և այլն:

Որպես ածականներ՝ այդ բառերը մեծ մասամբ պահպանում են գոյականի բառիմաստային հարաբերակցումը և ընդգրկվում հարաբերական ածականների շարքում, ինչպես՝ **տէր-անտեր**, **թէվ-անթէվ**, **թէփուռ-անթէ-փուռ**: Քիչ չեն **ան-** նախածանցով կազմված բառերը, որոնք անվանական նշանակությունը կորցնում են՝ դառնալով որակական ածականներ՝ առաջ բերելով ածականական նրբիմաստներ և ունենալով՝ **ա/ համեմատության եզրեր՝ իրէս-անիրէս «անամոթ»**, **խէլք-անխէլք «հիմար»**, **խիղճ-անխիղճ «զուր չունեցող, անզուր»**, **խէն⁹-անխէն «անհամ»**, **բ/չհամեմատվող եզրեր՝ ծամ-անծամ «անամոթ»**, **համութ-անհամութ «անպատկառ, աներես»**, **իրէս-անիրէս «անամոթ»**, **լուզոն-անլուզոն «չխոսկան, խոսել չկարողացող»**, **կ/զ/ին-անկ/զ/ին «թանկարժեք»**:

Ածականներ ձևավորող **ան-** նախածանցով բառերում առանձին խումբ են կազմում **-օթուն** վերջածանցով գոյականները: Բառակերտման այս եղանակով զգալիորեն հարստանում է Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի գոյականական կազմը: Բայց այս դեպքում առաջնային է ոչ թե գոյականական իմաստը, այլ ածականականը, որով-

⁷ Մարգարյան 1993, 100:

⁸ Մուրվալյան 1955, 254:

⁹ **խէն** բառը բարբառում ունի «կաթի յուղ» իմաստը:

հետև, ինչպես նկատում են¹⁰, գոյական ⇒ ածական ⇒ գոյական ածանցակերտմամբ խոսքիմասային անցման¹¹ միջոցով նոր գոյականներ են ձևավորվում այնպիսի բառերից, որոնք **-օթուն** ածանց չեն ստանում, ինչպես՝ **կապ⇒անկապ⇒անկապօթուն, կարք ⇒անկարք⇒անկարքօթուն, կօրծ⇒անկօրծ ⇒անկօրծօթուն, համուօթ ⇒ անհամուօթ ⇒անհամուօթօթուն: Կապօթուն, կարքօթուն, կօրծօթուն, համուօթօթուն** կազմությունների բացակայությանը փոխարինում են բացասական նշանակությամբ նոր հասկացություններ: Դրանց որոշ մասը կարող է առկայանալ բնիմաստով՝ որպես վերացարկված գոյականներ՝ առաջացած ածականներից՝ **անկարքօթուն** «անկարգ լինելը, չենթարկվելը» **անկօրծօթուն** «պարապ մնալը, լինելը», **անհամուօթօթուն** «ամոթ չունենալը», իսկ որոշները միանգամայն նոր՝ այլաբանական իմաստով են դրսևորվում, ինչպես՝ **անկապօթուն** «անտրամաբանական ինչ-որ մի երևույթ» և այլն:

Բայանուններից **ան-**ով ձևավորվող նոր բառեր բարբառախմբի բառապաշարում նույնպես կան, ինչպես՝ **կըղարէլ-անկաղար, բըշարէլ-անբաշար**¹², **հըմանչէլ-անհամանչ, ըզգալ-անզգամ, թըթախէլ-անթաթախ, թաղէլ-անթաղ, թափէլ-անթափ, լիվանալ-անլվալ, իփէլ-անիփ, խօսալ-անխօս, կէզ-անկէզ**: Դրանք մեծ մասամբ ձևավորվում են այն արմատներից, որոնք ինքնուրույնաբար հանդես գալ չեն կարող՝ **բաշար, թաղ, ի/է/փ, կէզ, խօս, կաղար**, կամ որպես բայանուն ունեն իրենց զուգահեռ բառաձևերը՝ **համանչ, թաթախ**, և՛ անուն են, և՛ բայանուն՝ **թափ**՝ «1. առաջին թափ՝ բերքի թափելը, 2. թափել, 3. ուժ», կամ մթագնած քերականական մասնիկներով են՝ **լվա, զգամ**:

Բարբառախմբում **ան-** ածանցով հականշային զույգերը կարող են կազմվել՝

ա) **գրաբարյան ձևերից**, կամ բառեր, որ **ան-** ածանցով անցել են **հին հայերենից՝ անհամբարք, անհաշտ, անհավատ, անհար, անհարմար/անյարմար/** և այլն: Իհարկե, **-ան** ածանցով հականշային զույգ կազմող այլ բառեր նույնպես կան, բայց սրանք և այսպիսիք առանձնացված են գրաբարից ավանդված բառերի շարքում, որովհետև՝ 1. որպես կազմություններ հանդիպում են գրաբարում, օրինակ՝ **անհօգի, անմասնը** բառերը կազ-

¹⁰ Մուրվալյան 1955, 254:

¹¹ Այն չպետք է շփոթել խոսքիմասային փոխանցման իրողության հետ, որովհետև, ինչպես նկատում է Լ. Խաչատրյանը, խոսքիմասային տարարժեք բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվում ենք դրանց շարահյուսական կիրառությամբ. ձևաբանական արժեքի բաշխումը (дистрибуция) տեղի է ունենում շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստագատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են (այս մասին տե՛ս Խաչատրյան 1985, 33):

¹² Նաև՝ **բեյբաշար||բեբաշար**:

մությանը և իմաստով գրաբարատիպ են՝ հին բառապաշարի գրական շերտից 2. որոշ մասը բարբառախմբին անցել է գրաբարում ձեռք բերված նոր իմաստներով, ինչպես՝ **անմարթ** «անբնակ, անպետքը «անօգուտ, անշահ», 3. կարելի է կարծել, որ որոշ բառեր հենց **ան-** նախածանցի համադրմամբ են անցել բարբառախմբին՝ **ան-պատան, ան-հար, ան-համբարք, ան-գէտ**.

բ) **փոխառություններից՝ բարիշ-ան/մ/բարիշ, բարիշտ-ան/մ/բարիշոթուն, գյուման** «անկասկած, անտարակույս»-**անգյուման** «անհույս», **վաղա-անվաղա** «անժամանակ», **վա/աի/լ-անվա/աի/լ** «տգեղ», **փայմ-ան-փայմ**¹³, **փուլ-անփուլ, դարար-անդարար** «անհանգիստ», **նամուս-աննամուս, թիքյա՛-անթքյա՛, դալու-անդալու, լա՛գաթ-անլա՛գաթ**¹⁴:

Հականշային այս շարքի ժխտման իմաստով եզրերը, չնայած կրել են հայերեն **ան-** ածանց՝ **ան/մ/բարիշ, ան/մ/բարիշոթուն** և այլն, այնուամենայնիվ մասամբ կամ ամբողջական, պահպանում են փոխառու լեզվի հնչողությունն ու իմաստը: Օրինակ՝ պոսկ. **pārašt**, որի նախնական իմաստներն են «երկրպագող, հավանող, պաշտող», թյուրքերենում և Սյունիք-Արցախ բարբառախմբում ձեռք է բերել **բարիշ/բարիշ, bariş** «խաղաղություն, համերաշխություն» իմաստները: Մենք այստեղ չենք քննի բառի ծագումնաբանությունը կամ նոստրատիկ հիմքերը¹⁵, հայերենի **բար** բառի հետ ունեցած առնչությունները, որովհետև բառը բարբառախմբի բառապաշարում փոխառյալ իմաստով և ձևով է գործածվում¹⁶.

գ/ **բարբառային բառերից՝ փոթ-անփոթ** «անբասիր». գրաբարում էլ գործածական է «ծալք, խորշոմություն, կնճիռ»¹⁷ իմաստներով: Բարբառախմբում այն երկու հիմնական իմաստով է հանդես գալիս՝ «1. **թնջուկ, զգեստի ծավված մաս, 2. փոխք. արատ, թերություն**»: Գորիսի բարբառում այն ունի նաև «ավելորդ» իմաստը. «Հեզնանքով է լսում նաև իր

¹³ Բարբառախմբում արդեն տարածում է ունենում նաև **անֆայմ** ձևը:

¹⁴ Չնայած այսպիսիք նշվում են հականշային խմբում, բայց պարզ է, որ քերականական պլանում տարարժեք են:

¹⁵ Այս մասին կարելի է տեսնել՝ Համբարձումյան 2012, 47 (այստեղ հեղինակը ներկայացնում է հայերենի **բարի-ք** բառին վերաբերող ուսումնասիրությունները, տողատակում մանրամասն վերլուծում նոստրատիկ աղբյուրները), Ջահուկյան 1987, 72:

¹⁶ Չենք կարող ստույգ ասել, թե այն հայերենի՞ց է անցել թուրքերենին, ապա թուրքական ձևով նորից անցել հայերենին՝ **-iş** ածանցով, կամ որ այն պարսկերեն՝ բառ է՝ **-իշ /-iš, -išn/** ածանցով և **տ** հավելումով, չնայած որ Հ. Աճառյանը **բարի** բառահողվածի ներքո նշում է, որ հայերենից փոխառություն է գնչ. **parave**՝ «բարև, ողջույն», որ Ա. Պասպատին փորձել է նույնացնել հնդիրանական «**pranāma, prunam**» «պաշտել, ողջունել» բառերի հետ (այս մասին տե՛ս Աճառյան 1971-1979, հ. 1, 424):

¹⁷ Աւետիքեան, Սիրմէլեան, Աւգերեան 1979-1981, հ. 1, 944:

երեքհարկանի փոթը՝ Հռաքել դայի-Տասը տարի»¹⁸, բայց հականշային շարքում հանդես է գալիս միայն գրք. «արատ, թերություն» իմաստներով:

Շառ-անշառ՝ «անվնաս, անփորձանք»: ՆՀԲ-ն նշում է «որպես արմատ բառիս շառագոյն՝ կարմրագոյն, բոսորագոյն (լծ. ոմկ. շիրայի գոյն)»: Հ. Աճառյանը նշում է արաբ. փոխառություն լինելը ԲԸՀՀšarr՝ «չարություն, չարիք, չար, խռովություն, կռիվ», իսկ հայերենի բարբառներում առկայանում է «փորձանք, աղետ, ամբաստանություն, զրպարտություն» իմաստներով¹⁹: Սյունիք-Արցախում հենց այս վերջին իմաստներով է գործածվում: Այդ են վկայում **շառ** արմատով կազմված բազմաթիվ հարադրություններն ու կապակցությունները՝ **շառ անէլ, շառավ տալ, շառը քաշել, շառ տինիլ, շառավ ինգէլ, խէր-շառ-Աստված**, Արց. **շառ սրհաթու ջիհիլ** «գործը ծախողվել, անհաջող լինել»: Հականշոթյան շարքում՝ **շառ** նշանակում է «փորձանք». «Ամեն անգամ վերադարձել էր ուրախ, սակայն հենց սանդուղքի գլխին մի կասկած փշի պես ծակել էր միտքը. չլինի՞ մի բան պատահի, հազար **շառ** ու դուշման, գան...»²⁰: Կան անվանական և կրկնավոր հարադրություններ՝ **շառ ու փոր-ձանք, շառ ու ցավ, շառ ու շուռ/շառու-շուռ** և այլն: Բարբառային հականշոթյան խմբի մեջ են ընդգրկվում նաև այնպիսի բառեր, որոնք կամ չեն հանդիպում հայերենի գրական տարբերակներում, կամ կազմված են այնպիսի արմատներից, որոնք բարբառում բառակազմական և իմաստաբանական տեղաշարժերի են ենթարկվել կամ մթազնել են իրենց նախնական տարբերակը, ինչպես՝ **քրստ/քէստանքը /է/ստ, բութա-անբութա «անհույս», անգէնգիշ «առանց իմանալ» - չգիդալակ, անկուճ, անկըռէք** և այլն:

Բարբառախմբի հականշային շարքերում **ան-** նախածանցով կազմությունները իմաստային առումով մի շարք առանձնահատկություններ ունեն: Լեզվաբանական գրականության մեջ բառային նոր իմաստ ձևավորվելու հատկանիշը մեծ մասամբ վերագրվում է բաղադրություններին՝ բարդություններին²¹ և ածանցավոր բառերին: Վերջիններս սովորաբար նրբիմաստներ են հավելում հիմնական ձևայիններին: Բայց կան ածանցներ, որոնք բոլորովին նոր իմաստ են հաղորդում բառին, և ճիշտ է նկատված, որ «քիչ ուշադրություն է նվիրվել նրա (խոսքը ածանցների մասին է՝

¹⁸ Խանգաղյան 1966, 121:

¹⁹ Աճառյան 1971-1979, 496:

²⁰ Բակունց 1986, 491:

²¹ Հատկապես նկատի ունենք իսկական բարդությունները (այս մասին կարելի է տեսնել՝ Առաքելյան, Խաչատրյան, Էդյան 1979, 302-351), որոնց «ամենաբնորոշ առանձնահատկությունը նոր իմաստ արտահայտելն է. այսինքն՝ բառը ստանում է մի այնպիսի նոր իմաստ, որ նրա բաղադրիչները չունեն առանձին-առանձին, և բարդության արտահայտած իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների իմաստի մեխանիկական գումարից» (այս մասին տե՛ս Մկրտչյան 1972, 101, Մկրտչյան 1977, 85):

Մ.Ք.) իմաստաբանական վերլուծությանը»²²: Այսպես՝ բարբառային բառերում **ան-** նախաձանցով ձևավորված հականշային զույգերի ժխտվող, բացասվող, հակադրվող իմաստային նրբերանգը, ինչպես նկատելի է, ազդում է բառի ամբողջական իմաստին, և հիմնական ձևույթի հետ մեկտեղ առաջ է բերում բոլորովին նոր իմաստ, իսկ ածանցի նշանակությունը մասամբ մթազնում է, ինչպես՝ **անլուզու** հականշային շարքում նշանակում է ոչ թե «լեզու չունեցող», այլ «չխոսող, լուռ, մունջ», **անըսելի** չի նշանակում «չասվող», այլ «1. չափազանց, 2. անպատճաշ», **անխեն**՝ ոչ թե «անյուղ», այլ «անհամ», **անփոխան** բառը ունի նաև «աղքատ» իմաստը, **անծոխ** բառը «ծխագուրկ» իմաստից բացի նշանակում է «համայնք չունեցող»²³, **անյեք/կ/** նշանակում է ոչ թե «չեկած», այլ «չթթված խմոր»²⁴ և այլն: **Անլուզու, անըսելի, անխեն, անփոխան, անծոխ, անյեք/կ/** բառերը, փաստորեն, մասամբ կամ ամբողջական չունեն նույնարմատ հականիշները: Օրինակ՝ **անլուզու** «չխոսող, լուռ, մունջ»-**լուզվանի** «խոսող, շատախոս», **յեկած** «թթված խմոր», բայց **անըսելի** «1. չափազանց, 2. Անպատշաճ» բառի իմաստներին հակադրվող **ըսելի**-ն չի նշանակում «ոչ չափազանց» կամ «ոչ անպատճաշ», այլ կրում է հակիմաստության երևույթ՝ հարցական երանգով՝ «Տա ըսե՞լի պաննա՛, վեր ասեմ»՝ որպես հոմանիշ **անըսելի** բառին: Այսպես նաև մյուս բառերը՝ **խեն** «կաթի յուղ», **փոխան** «հագուստ», **ծոխ** «1. քուլա, 2. ընտանիք»:

Բարբառախմբի բառապաշարում ժխտական իմաստից առաջացել են նաև անվանումներ, որոնցում ժխտման իմաստը կա՛մ բացասվում է, կա՛մ երկրորդ պլանում է, ըստ այդմ էլ՝ հականիշների զուգակցությամբ առաջ են գալիս նոր բառեր, որոնցից որոշները համալրում են բարբառախմբի բառապաշարի համանունների շարքը, ինչպես՝ **թառամ-անթառամ** «չթառամող», **անթառամ** «անթառամ ծաղիկ», **անկիր** «բանաստեղծություն», **անհէտ** «անհայտ, անդառնալի», **անճոռնի, անմահական, անդուրմ** «1. անխիղճ, 2. անճար» և այլն: Վերջին երեք օրինակներում անաձանց ձևերը բարբառախմբին հայտնի չեն՝ **-ճոռնի, -մահական, -դուրմ**:

Համարմատ հականիշներից Այունիք-Արցախ բարբառախմբում **ան** ժխտական նախաձանցով ձևերին քանակապես գիշում են չ-ով կազմությունները՝ **չխօս, չմէթկը, չըհաս, չըկէր, չըկամ, չըխօսկան, չըգիդայլոք, չգի-դայլալ, չըպէր, չըտէս, չունեվօր**, որոնք նոր բառեր են ստեղծում հիմնականում այնպիսի բայանուններից, որոնք ինքնուրույն չեն գործածվում՝

²² Ջահուկյան 1989, 82:

²³ Այս դեպքում թերևս գործ ունենք բառային համանունության հետ՝ **ծուխ** «կրակից արձակված օդը», և **ծուխ**՝ «բնակչություն, տուն»:

²⁴ Այստեղ գործածվում է փոխանունության հետ՝ գործողության անունը առարկայի և նրա հատկանիշի փոխարեն:

չրհաս, չըխօս, չըկամ, չըպէր, չըտէս: Այնուամենայնիվ, չ ածանցով կազմություններն ունեն իրենց նույնարմատ հականիշ զույգերը:

Տ ածանցով առկա է **տըրհալ** «չհալած, անմարս», որ իմաստի մթագնամբ անցել է գրաբարից²⁵ «ղավորմա, յողի մեջ տապակած միս՝ պահուստի համար»:

Ինչպես հայերենի մյուս տարբերակներին, այնպես էլ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարին անցել են նաև փոխառյալ ածանցներ: «Հայտնի է, որ լեզուները միմյանցից առանձին բառակազմական ձևեր՝ ածանցներ փոխ չեն առնում»²⁶: Սակայն ժողովուրդների փոխշփման հետևանքով փոխառվել են ոչ միայն բառեր, այլև ածանցներ: Ածանցների փոխանցման եղանակները տարբեր են, և դրանցից բարբառային տարածքում տարածված է այն, որ «երբ լեզուն փոխ է առնում միևնույն ածանցն ունեցող մի շարք բառեր, այդ ածանցն աստիճանաբար այնքան է հարազատանում նոր լեզվի համար, որ սկսում է նմանակության շնորհիվ տարածվել և ընդգրկել մի շարք այլ կազմություններ»²⁷: Այսպես՝ **բէ-/բէյ-** պոսկ. **bi-** ժխտական նախածանցով հականշային զույգեր կազմվում են ոչ միայն փոխառություններով՝ **աբուռավ-բի/է/աբուռ, քէփը տեղը-բէքէփ/Ֆ/, խաբար-բէխաբար**, այլև հայերեն բառերով՝ **հրւշը տեղը-բէհրւշ, աստղավ-բէասթըղ, շնօրհքավ-բէշնօրհք**: Այս ածանցը բավական տարածված է թյուրքերենում և պարսկերենում: Եվ եթե թյուրքերենում այն առավելապես տարածված է որպես նախդիր կրկնավոր կազմություններում²⁸, իսկ պարսկերենում ունի մակբայական նշանակությամբ բառակապակցություններ ձևավորելու գործառույթ՝ հայերենի տրական հոլովի դերով²⁹, ապա Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում զուտ հականշային միջոց է բառային զույգերում: Հայերենի ոչ բոլոր բարբառներում է, որ **բէ-** ածանցը գործածության լայն շրջանակներ է ընդգրկում: Օրինակ՝ եթե Սյունիք-Արցախ բարբառախմբում այն մասամբ տարածվում է հայերեն բառերի վրա, նրանով կան այլ տիպի կազմություններ, այդ թվում՝ հաստատական և ժխտական զուգահեռ ձևեր, ապա Արարատյան բարբառում, ինչպես նշում են ուսումնասիրողները, «**բէ** ժխտական նախածանցը արտահայտում է **ան-**ի իմա-

²⁵ Մարգարյան 1975, 260:

²⁶ Էլոյան 1959, 64:

²⁷ Էլոյան 1959, 65:

²⁸ Թյուրքերենում **be-** ածանցը գործածվում է նաև բայի դիմավոր ձևերի հետ, ուստի կարելի է կարծել, որ որպես բառաքերականական ձևույթ առավել գործածական է թյուրքերենում (այս մասին տե՛ս Аганин 1959, 30):

²⁹ Բախշինյան, Բիանջյան, Ղազարյան, Մելիքյան 2011, 198:

ստը, բայց համեմատաբար սահմանափակ կիրառություն ունի և... հանդիպում է փոխառյալ բառերի հետ, ...գիտակցվում է իբրև առանձին ածանց»³⁰:

Բառեր կան, որ առանց **բէ-** ժխտական ածանցի գործածություն չունեն, և կարելի է կարծել, որ այդպիսիք քարացած ձևով են անցել բարբառախմբին, ինչպես՝ **բէդամաղ** «նեղացած, վիրավորված, վշտացած»՝ **բեդամաղ անէլ, ինէլ, բէդնամ**՝ թյուրք.՝ **bednam** «վատահամբավ, անպատիվ, անանուն»՝ **բէդնամ անէլ** «խայտառակել, վարկաբեկել, անվանարկել»:

Կան բառեր, որոնցում ածանցը ոչ միայն տրոհվում է, այլև ունի **ան-** հայերեն ածանցով նույնարմատ հոմանիշները՝ **անբաշար-բեբաշար/բեյբաշար/ան/մ/բաշար/, բէբըըըըըը, աննամուս-բէյնամուս, անարուրբե/յ/արուր /առակ-պառակ/, անբախտ-բէբախտ, անբախտություն-բէ-բախտություն, անաստղ-բէյաստղ** «անաստղ, անհրապուրիշ», **անլազաթ-բէլլազաթ** «տհաճ, տհաճություն պատճառող, անհավես»:

Հականշային զույգ կազմող այդ բառերի մեծ մասը դուրս է մնում բառապաշարի կազմից, փոխարինելու են գալիս նոր տարբերակներ՝ անցած գրականից և խոսակցական մյուս տարբերակներից: Հականշային շարքերում այդպիսիք այլևս անհասկանալի են նոր սերնդին. այսպես՝ ըստ մեր հարցումների³¹ **բէ-** նախաձանցով բառերն ունեն այսպիսի պատկեր.

1. Բառեր, որ դուրս են մնացել, և սակավաթիվ մարդիկ են՝ կա՛մ շատ տարիքով, կա՛մ տարեցների հետ երկար ժամանակ ապրած, որ ճանաչում են՝ **բը/ի/հէշպ՝ բիհէշպ քիցէլ, ինէլ/ըղնէլ** «անկողին ընկնել, անկողին գցել», **բէյուղուբ** «տեսողությունից զուրկ, թույլ, անհետադարձ», **բէթխո**³² «վատ բնավորություն ունեցող»:

2. Բառեր, որ հասկանալի և գործածական են 40-ից բարձր տարիք ունեցող տեղացիների, մասամբ նաև 40-ից ցածր մարդկանց համար, որոնք չեն գործածում, բայց լսել են և գիտեն դրանց իմաստը՝ **բէթահրը** «անասելի, անէլանելի», **բէյմահլում անէլ**³³ «թաքցնել, անտեսանելի դարձնել», **բէյմարիփաթ** «անշնորհք», **բէ/ը/թաիաի անէլ**³⁴ «ծեծել, տանջել», **բէդինջ** «1. ան-հանգիստ, 2. բարբառախմբում՝ բիրբիթուն/բուրբուիթուն, բուրբուիթուն»: **Բէթահրը, բէյմահլում, բէթաիաի անէլ, բէդինջ** բառերը գործածական չեն, հասկանալի են, որովհետև ունեն դրական ձևերը՝ **թահրը, մահլում, թաիաի, դինջ**. Ժխտական կազմությունները այլևս փոխարինված են հոմանիշ բառերով, բառաքերականական կապակցություններով՝ **թահրը**

³⁰ Բաղդասարյան-Թափալցյան 1972, 84:

³¹ Բառերը հարցման ձևով շրջանառել ենք մոտ քառասուն մարդու շրջանում՝ տարբեր տարիքի (7 մարդ՝ 30-40 տարեկան, 18 մարդ՝ 18-30, 15՝ 40-ից բարձր):

³² Ծագումը մեզ անհայտ է:

³³ **Բէյմահլում** «անտեղյակ, չերևացող»

³⁴ **Բէթարաի**՝ թյուրք. bitaraf «մեկուսի, չեզոք»:

չկա, մահլում չի տամ, թակել/չըրչարել, շարժուն, բուրբուրթուն և այլ բառերով: Եվ հենց նշվածներն են կազմում հականիշ զույգեր՝ **թահրը ինել, մահլում տալ, թարիփ անել, պա/ը/շպանել, թըմրած /բըլընգած** և այլն:

3. Բառեր, որ հասկանալի են, դուրս չեն մնացել բառապաշարից, բայց հազվադեպ են գործածվում 40 տարեկանից բարձր մարդկանց կողմից՝ **բէբըըըըը/բէբըըըըը** «շնորհագուրկ, ապաշնորհ», **բէդամաղ անել** «նեղացնել, վիրավորել, վշտացնել», **բէդովլաթ** «անպետք, փուչ, ծույլ», **բէ-հալ** «հիվանդ, ուժասպառ, հոգնած, ծանր վիճակում»:

4. Բառեր, որոնք հասկանալի են և հականշային շարքում կայուն են՝ նամուսավ-**բէյնամուս**՝ թյուրք. binamus «անամոթ, անպատկառ, անպատիվ», **ջուռա**³⁵-**բէջուռա** «տգեղ, այլանդակ», **խաբար-բէխաբար** պրսկ. bexabar/be-haber/ «անտեղյակ», **բէփավ-բէքէփ/բէքեֆ** «տխուր, անտրամադիր», **բէքէփ անել** «տրամադրությունը գցել», բէքէփանալ «տխրել, տրամադրությունը գցել», բէքյեփըցնել «վշտացնել», բէքյեփօթուն «անտրամադիր վիճակ»³⁶:

Այս փոխառությունները ուշ են անցնել բարբառախմբին և շուտ էլ դուրս են մնում՝ իրենց տեղը զիջելով հատկապես գրական տարբերակներին: Այդ երևույթը հաստատվում է նաև այլ տվյալներով. «Նկատի ունենալով, որ այդ բարբառների մեջ թուրք-թաթարերեն բառերն ընկել են անմիջական ճանապարհով, մենք կարող ենք որոշել, թե այդ բարբառների տեղաշարժի հատկությունը ո՞ր ժամանակվանից է սկսել կորչել: Թուրք-թաթարական հետևյալ բառերը, որոնք բառասկզբին ձայնեղ ունեն, այդ բարբառներում մնում են ձայնեղ»³⁷: Ինչպես **բէ-**, այնպես էլ քիչ հանդիպող **բէդ** ժխտական ձևույթներով բառերում ձայնեղների տեղաշարժեր չեն նկատվում՝ **բէդոանգ/բէդըոանգ** «անգույն»-գունավոր, **բէդվէսկեր** «ոչ ոսկրոտ, ոչ հաստ բազուկներով»-վըսկըրօտ և այլն:

Բէ- ածանց ունեցող բառերին թե՛ քանակապես և թե՛ գործածությամբ զիջում են թյուրք. **Սիզլլսըզ**՝ **-siz** վերջածանցով կազմությունները: Սրանք աստիճանաբար դուրս են մղվում բառապաշարից: Սյունիքում գրեթե բացակայում են **-սիզ** ածանցով բառերը, իսկ Արցախում՝ հատկապես գյուղական վայրերում, այդպիսիք տակավին ճանաչվում են: Պատճառը հավանաբար հենց նույն ածանցի առկայությունն է, որ գիտակցել է տալիս

³⁵ Գործածական է «բազմազան, բազմատեսակ, տարբեր» իմաստներով: Կարծում ենք, որ **բէջուռա** բառի իմաստները առաջացել են «մի տեսակ, բոլորից տարբերվող» իմաստ-հասկացություններից:

³⁶ **Բի-** ածանցով գործածական **բիքնած, բիքյնըվել** «փքվել», **բիքնածօթուն** «փքված, շատ ուտելուց փքվելը»՝ **բիքյնօց, բիքյնըցնել** բառաձևերը, սակայն, չունեն հականիշ եզրեր:

³⁷ Ղարիբյան 1958, 284:

ծագումը: **-Սիզ** արմատով փոխառությունների քննությունից պարզ է դառնում, որ սրանց մեծ մասը հայերենին անցել է բավական ուշ՝ թյուրքերենի միջնորդությամբ, չնայած որոշ արմատներ վկայված են միջին հայերենում՝ առանց ժխտական ածանցի: **-Սիզ** ածանցով բառերից ոչ բոլորն են, որ բարբառախմբում ունեն նույնարմատ հականշային զույգերը: Ահա քննենք դրանցից որոշները.

Դինսըզ. din «հավատք, կրոն, դավանանք, հնազանդություն» և այլն +**siz** «անհավատ» կազմությունն է: Թյուրք. «պատիժ, տուգանք» իմաստները մասնակիորեն դրսևորված են **դինսըզ** բառում՝ ոչ միայն «անհավատ», այլև «անպատիժ մնացած», իսկ դրական ձևում՝ **դին**, գործածվում է հիշոցներում «կրոն, հավատք» նշանակությամբ՝ դինտ...: **Դինսըզ** բառին՝ ժխտական ածանցի ճանաչմամբ հակադրվում են **քրիստոնյա, հավատացյալ, կարքին** բառերը:

Իմանսըզ. արաբ. փոխառություն է արևելյան լեզուներում՝ առաջացած **إيمان /imân/** «հավատք» բառից: Տարածված է արևելյան լեզուներում՝ օսմ. **إيمان /imân/**, թրք. **iman. imansiz** անցել է թյուրք.՝ «1. անհավատ, անհոգի, 2. փխբ. անզգամ, անպատկառ» իմաստներով: **Իման** առանձին ձևով գործածական է հիշոցներում **դին** բառին զուգահեռ՝ այլազգիների անօրինականությունների մասին խոսելիս: Մյուս ձևերն ու իմաստները դուրս են մղվում բարբառախմբից: Լինելով **դինսըզ** բառին նույնանիշ՝ հականշային զույգ են կազմում **հավատացյալ, օրինավոր** և այս իմաստով այլ բառերի հետ:

Արսըզ, առսըզ, արսըզօթուն «1. անամոթություն, անպատկառություն, 2. դիմացկուն». ծագում է արաբերենից՝ **عيا /âr/** «1. մերկ, տկլոր, 2. ամոթ» բառից, որ վկայվում է օսմ. **عيا /âr/**, թյուրք. **ar**՝ «ամոթ»: Առանձին գործածություն ունի **առ**՝ որպես անեծք՝ չանչ անելով՝ **առ է**: **Արսըզ/առսըզ** բազմիմաստ բառ է «1. անհոգ, 2. անամոթ, անպատկառ, 3. Դիմացկուն»: Կարծում ենք, որ **առ**-ը ավելի վաղ է անցել հայերենին, պարսկերենից կամ քրդերենից. վկայվում է միջին հայերենում, Ամս. Ար. Թբ. Խտջ. Հմշ. Մեղ. և այլուր «ամոթ, պատկառանք» իմաստներով: Կան այլ կազմություններ՝ Ջվ. **Առ-աբուռ**, Ար. **Առ/ը/անել**, Սյ.-Արց. **առ հըմարել**: **Արսըզ/առսըզ, արսըզօթուն** բառերի հականիշ եզրերն են **թուլ, թուլություն, իրէսին ճիրավ, համութավ**:

Սիզլլսըզ ժխտական իմաստով ածանց կրող բառերի մեծ մասը կազմում է հականուններ, ինչպես՝ **դոսըզ-օրինավոր, ճըշտավէր, թայսըզ** «զույգը կորցրած, առանց զույգի»-**զույգավ, թայավ, խոյսըզ**³⁸, **խօյսըզ, քոյսըզ, քոյսըզ** «անտաշ, կոպիտ, բռի»-**կըրթը տէղը, հինըրսըզ/հընըրսըզ**

³⁸ Հավանաբար **սըզ**-ը կցված է ոուսերեն բառին:

«անճարակ, անհմուտ, պարզամիտ»-աշպուտ, **ճարպիկ, մուրվաթսրզ/ մըր-վաթսրզ** «անխիղճ»-խըխճավ, **չըլմսրզ, ջանսրզ, ջանսը-գօթուն** «վտիտ, փոքրիկ, տկար» **ածղ/լ/ահա, յէքա, անտաշ քէրծ, սօն-գսրզ, սօնգսուզ** «չբեր»-խօխա **պիրօղ, վախսրզ, բէյվախտ** «անժամանակ»-սըհաթին, **ժամանակին, վախտին:**

Հականշային շարքերում պատահում են նաև **-նի||-նը||-նա** օտար ածանցով բառեր, որոնցում, սակայն, ածանցը մթագնած է՝ հավանաբար արմատի ինքնուրույն գործածության բացակայության պայմաններում, ուստի և նույնարմատ զուգահեռները գրեթե բացակայում են, ինչպես՝ **հանգիստ-նիգարան** «անհանգիստ», **նըհախ** «ապարոյուն»-**տէղին, նաչար, նըչըրօթուն** «անզոր, անզորություն»-**աշպուտ, նըքութօթուն** «թմրություն»-**ուրախ (տուրուր կյալը), նամարդ-մըրթըվարի** և այլն:

Այսքանով չեն սահմանափակվում ժխտական ածանցներով կազմված հականիշները: Կան այլ կազմություններ, որոնք յուրահատուկ հականշություն են ձևավորում բարբառային բառապաշարում՝ առաջ բերելով խոսակցական ոճին բնորոշ նոր հասկացություններ, ոճական գործառույթներ՝ ծանրաբեռնված հնչյունական, բառակազմական, իմաստաբանական, քերականական և շարահյուսական տարբեր հատկանիշներով:

Գրականություն

- Աճառյան Հր. 1971-1979, Հայերեն արմատական բառարան (4 հատորով, 2-րդ հրատարակություն), հ. 1, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.» (1-ին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), 700 էջ:
- Առաքելյան Վ.Դ., Խաչատրյան Ա.Հ., Էլոյան Ս.Ա. 1979, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1 (Հնչյունաբանություն և բառագիտություն), Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», 488 էջ:
- Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1979-1981, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837, 2-րդ հրատ. (2 հատորով), հ. 1, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 1142 էջ:
- Բախշինյան Մ., Բիանջյան Հ., Ղազարյան Լ., Մելիքյան Գ. 2011, Պարսկերենի դասագիրք, Երևան, «ԻԿԿ հրատ.», 286 էջ:
- Բակունց Ա. 1986, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 671 էջ:
- Բաղդասարյան-Թափալցյան Ս. 1972, Ածանցները և ածանցական օրինաչափությունները Արարատյան բարբառում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 10, Երևան, 84-95 էջ:
- Էլոյան Ս. 1959, Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, 46-68 էջ:

- Խանգադյան Ս. 1966, Մատյան եղելությանց, Երևան, «Հայաստան» հրատ., 225 էջ:
- Խաչատրյան Լ. 1985, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, «Լույս», 138 էջ:
- Խլղաթյան Ֆ. 1976, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երևան, «Լույս», 110 էջ:
- Համբարձումյան Վ. 2012, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, «Գիտություն», 224 էջ:
- Հովհաննիսյան Լ. 1990, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, «Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.», 304 էջ:
- Ղարիբյան Ա. 1958, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, 240-266 էջ:
- Մարգարյան Ա. 1975, Գորիսի բարբառը, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 565 էջ:
- Մարգարյան Ա. 1993, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, «Երևանի համալսարանի հրատ.», 232 էջ:
- Մկրտչյան Ռ. 1972, Բարդ բառերի դասակարգումը հայերենում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, 100-106 էջ:
- Մկրտչյան Ռ. 1977, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, N 4, Երևան, 77-158 էջ:
- Մուրվալյան Ա. 1955, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, «Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.», 435 էջ:
- Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.», 748 էջ:
- Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, «Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.», 319 էջ:
- Аганин Р. 1959, Повторы и однородные сочетания в современном турецком языке, Москва, "Изд. восточной литературы", 145 с.

**ՀԱՎԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԾԱՆՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՆՈՒՅՆԱՐՄԱՏ ԵՎ ՏԱՐԱՐՄԱՏ ԲԱՌԵՐՈՒՄ
(ըստ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի. համաժամանակյա և
տարաժամանակյա քննություն)**

Միեր Քումունց

Ինչպես գեղարվեստական խոսքում, այնպես էլ կենդանի խոսակցական լեզվում հականիշ բառախմբերն ունեն բառային, քերականական և ոճական տարբեր առանձնահատկություններ:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում հիմնականում տարածված են **ան, բէ||բէյ||բէդ, նա||նը, չ** ածանցները, որոնցից առավելապես գործուն է **ան**-ը:

Բարբառային խմբում **ան**- ածանցով հականիշներ կարող են կազմվել՝

ա) գրաբարյան ձևերից, բ) փոխառություններից, գ) բարբառային բառերից: Այս բարբառային տարածքի բառապաշարին անցել են նաև փոխառյալ ածանցներ **բէ-/բէյ-**՝ **աբուռավ-բի/է/աբուռ, քէփը տեղը-բէբէփ/Ֆ/, խաբար-բէխաբար, և սիզ||սըզ՝ -siz** վերջաձևացով կազմությունները՝ **հայսըզ, արսըզ, իմանսըզ** և այլն:

Այսպիսով՝ տարբեր ածանցների միջոցով հարստացել են ոչ միայն Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի հականշային շարքերը, այլև բառային կազմը:

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախ, բարբառ, բառապաշար, ածանց, հականիշ, փոխառություն, գրաբար:

**СУФФИКСНЫЕ СРЕДСТВА ОБРАЗОВАНИЯ АНТОНИМОВ В
ОДНОКОРЕННЫХ И РАЗНОКОРЕННЫХ СЛОВАХ
(на основе Сюникско-арцахской диалектной лексики:
синхроническое и диахроническое исследование)**

Мгер Кумунц

Как в художественной речи, так и в разговорном языке антонимы имеют различные словарные, грамматические и стилистические оттенки.

В Сюникско-арцахском диалекте особо распространены суффиксы **ан-, бе-||бей-||бед-, на-||ны-, ч-** (**ան, բէ||բէյ||բէդ, նա||նը, չ**), однако наиболее активным является суффикс **ан-(ան-)**.

В данной диалектной группе антонимы с суффиксом **ан-(ան-)** могут быть образованы от **а. древнеармянских (грабар), б. заимствованных, в. диалектных слов.**

В Сюникско-арцахском диалекте используются также заимствованные суффиксы – **бе-||бей-(բէ-||բէյ-):** **абурав-би/е/абур** (**աբուռավբի/է/աբուռ**), **кеп/ф/ы техы-бекеп/ф/** (**քէփը տեղը-բէբէփ/Ֆ/**), **хабар-бехабар** (**խաբար-բէխաբար**), **-сиз||-сыз (-սիզ||-սըզ):** **айасыз (հայսըզ), арсыз (արսըզ), имансыз (իմանսըզ)** и т.д.

Ключевые слова – Сюник-Арцах, диалект, лексика, производная, антоним, заимствование, грабар.

AFFIXAL MEANS OF FORMING ANTONYMS IN WORDS OF THE SAME AND DIFFERENT ROOTS

(according to Syunik-Artsakh dialectal vocabulary: synchronous and asynchronous examination)

Mher Kumunts

The same way as in artistic speech, also in spoken language antonymous word groups have vocabulary, grammatical and stylistic different peculiarities.

In vocabulary of dialectal area Syunik-Artsakh are mainly spread **an-**, **be-** ||**bei-**||**bed-**, **na-**||**ny-**, **ch-** (**ան-**, **բէ-**||**բէյ**||**բէդ-**, **նա-**||**նը-**, **չ-**) affixes, most of which the **an-** (**ան-**) is in use.

In dialectal group antonyms with affix **an-** can be formed **a/ from old Armenian forms (grabar)**, **b/ from loans**, **c/ from dialectal words**.

To vocabulary of Syunik-Artsakh dialectal area passed also loaned affixes **be-**||**bei-** (**բէ-**||**բէյ-**): **aburav-bi-/e-/abur** (**աբրուավ-բի/է/աբրու**), **qepy texy-beqep /f/** (**քէփը տեղը-բէքէփ/ֆ/**), **khavar-bekhabar** (**խաբար-բէխաբար**), and forms with **siz-**||**syz-** (**-սիզ**||**-սըզ**) suffix: **hayasyz** (**հայա-սըզ**), **arsyz** (**արսըզ**), **imansyz** (**իմանսըզ**), etc. So, through different affixes enriched not only anonymous ranges of Syunik-Artsakh area vocabulary, but also word forms.

Key words – Syunik-Artsakh, dialect, vocabulary, derivative, antecedent, loan words, Grabar.